մի՛ առցէ, այլ 'ի հին միաբանաց զոր ն եւ կամիցի, թէ 'ի սպասաւորացն վարդապետաց և թէ յայլոց գործակալաց, Նոյնպէս Լուսարարն եւ Զուխանին · զի մեծամեծ վնաս կրեալ է յայսպիսեաց Ս · Վանքն և երբեմն կրել։ Պատրիարքն եթէ կամիցի չինութիւն կամ նորոգութիւն առնել, խորհրդով գործակալաց արասցէ · զի մի՛ յետոյ բամբասանաց տեղի լինիցի։

Երկրորդ, զոր ինչ տացեն Զուխանի կոչեցելոյն՝ տումարաւ լիցի, մի տումար յարկէն պահեսցի և մի տումար առ Զուխանին · և 'ի կատարիլ տարւոյն հաշիւն տեսցի, և Զուխանին զոր ինչ տացէ, գրեսցէ, և առանց հարցանելոյ գործակալաց ումեք ինչ մի՛ տացէ · զի մի՛ յետոյ բամբասանս կրեսցէ։

Երրորդ, Պատրիարքն առանց գիտութեան Նաղրաց միաբան մի՛ առցէ · Նոյնպէս եւ այլք առանց գիտութեան Պատրիարքին, եւ առանց գիտութեան միմեանց մի զոք արտաքսեսցեն և կամ աքսորեսցեն։

Չորրորդ, 'ի մէջ վանաց և արտաքոյ գործակալ կարգել՝ եւ Նուիրակ կացուցանել գիտութեամբ խորհրդականաց լիցի ըստ պատշաճին, և մի՛ ըստ ոմանց ախորժակաց։

Հինգերորդ, Ս · Պատրիարքն զիւրսն և զհասարակն մի՛ որոշեսցէ նախանձ արկանելով 'ի մէջ միաբանաց և տեղի տալ տրտնջանաց և բամբասանաց · զի վերասցի խմն և քոյն։

Վեցերորդ, 'ի մեռելոց որ ինչ 'ի Զուխանին առեալ լինի, ըստ հաճոյից իւրոց մի՛ տնօրինեսցէ · այլ կամօք և գիտութեամբ խորհրդականաց ըստ պատշաճին, եւ մի ոք յափշտակեսցէ ըստ հաճոյից իւրոց։

Եօթներորդ, Ս · Պատրիարքն բաց 'ի հասարակ ծախուց՝ վասն Պատրիարքարանին, զոր ինչ ծախեսցէ գրով նշանակեսցէ, և ձեռամբ խորհրդականաց հասարակաց արկղէն առցէ · եւ թէ ում և իցէ պարգեւ ինչ տացէ՝ զայն եւս գիտութեամբ 'ի հասարակ հաշիւն համարեսցէ եւ անտի առցէ, ում եւ երբ տուեալ է, նշանակեսցէ։ Եւ 'ի կատարիլ տարւոյն քննութիւն լիցի տումարաց, եւ Ս · Պատրիարքն վրէժխնդիր լիցի · եւ ինքն տացէ զհաշիւ կոնդակագրամոց և այլոց, և յայլ գործակալաց պահանջեսցէ, և մի ոք ընդդիմասցի Ս · Պատրիարքին։